ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԿՕՍ

ԹԻՒ 944 • 6 ՅՈՒՆԻՍ 2014

Բացում՝ Պոլսահայ Միութեան «Հրանդ Տինք» սրահի

«Ակօս»ի հիմնադիր՝ Հրանդ Տինք, իր եղեռնական սպանութենէն ետք դարձաւ Հայ ժողովուրդի ապրած դաժան պատմութեան մերօրեայ կարեւորագոյն խորհրդանշանը: Այդ իսկ պատճառաւ ալ ամէն 19 Յունուարին նախորդող կամ յաջորդող օրերուն կը յիշատակուի զանազան միջոցառումներով: Բացի այդ աշխարհի զանազան քաղաքներու մէջ փողոցներ իր անունը կը կրեն, Փարիզէ եւ Խթանպուլէ ներս իր անունով դրոշմուած դպրոցներ կը գործեն եւ ան յարատեւօրէն կը յիշատակուի ամենուրեք:

Այս ծիրէն ներս, վերջին կարգադրութիւնն ալ կատարուեցաւ նոր աշխարհի հայաշատ կեդրոններէն Լոս Անճելըսի մէջ: Ամերիկա գաղթած նախկին պոլսահայերու կողմէ հիմնուած Պոլսահայ Միութիւնը, 4 Յունիս Զորեքշաբթի օր պաշտօնապէս բացումը կատարեց Հրանդ Տինքի բանախօսութեան սրահին: Այս միջոցառման ներկայ գտնուելու համար Միացեալ Նահանգներ ճամբորդած էր Ռաքէլ Տինք, իր հետ ունենալով Հրանդ Տինք Հիմնարկի ծրագիրներու համակարգող Զէյնէպ Թաշքընը:

Սահակ Սրբազան Եսիգիւղի մատաղօրհնութեան խիստ ելոյթով արդարացուց հոգեւորականի սքեմը

Հասկացողաց շատ բարեւ

25 Մայիս Կիրակի տեղի ունեցաւ Եսիգիւղի Գիւտ Տփոյ Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ մատաղօրհնութիւնը: Մեծ թիւով բարերարներու եւ համայնքային հաստատութիւններու վարիչներու մասնակցութեամբ մատուցուած Սուրբ Պատարագէն ետք եկեղեցւոյ շրջափակին մէջ սարքուեցաւ աւանդական Սիրոյ սեղանը: Թաղային խորհուրդի անդամներէն Արի Տէմիրճիօղլու տեղեկութիւններ փոխանցեց խորհուրդի աշխատութիւններուն մասին: Տէմիրճիօղլու յատկապէս կանգ առաւ թաղային խորհուրդի ընտրութիւնը Իսթանպուլի տարածքին տարածելու որոշումէն ետք, նախկին թաղականներէն Յակոբ Պալթաեանի եւ Պիւյուքփէրէի Սուրբ Հռիփսիմեանց եկեղեցւոյ թաղական խորհուրդի ատենապետ Մուրատ Սիմէի իրենց թաղականութեան դէմ յարուցած դատին ու աւելցուց. «Պալթաեան եւ Սիմէ իրականութեան մէջ դատը բացած են Վաքըֆներու Ընդհանուր Տնօրէնութեան Իսթանպուլի Ա. Շրջանի վարչութեան դէմ: Մենք մասնակցելու իրաւունքի համար դիմում կատարեցինք դատարանին: Մինչեւ վերջ պիտի պաշտպանենք մեր օրինական իրաւունքները»:

Յատուկ յուշանուէր մը յանձնուեցաւ եկեղեցւոյ վաստակաւոր դպիրներէն Կարօ Սեղփոսեանին, իր 25-ամեայ նուիրեալ ծառայութեան առթիւ: Ապա Սիրոյ սեղանի աւարտին Սահակ Եպսկ. Մաշալեան բաւական խիստ ելոյթ մը ունեցաւ: «Չեմ գիտեր թէ բոլորդ ուշադրութեամբ հետեւեցա՞ք թաղային խորհուրդի խօսքերուն: Ինչ է իրենց բողոքը: Մեր այժմու հիմնական խնդիրներէն մէկն ալ բնակչութիւնը նօսրացած թաղերէն ներս ընտրութիւններուն թափանցիկ եւ արդար կատարուելու հարցն է: Մինչդեռ վերջերս կարեւոր իրաւունք մը ձեռքբերած ենք: Այս կարգի եկեղեցիներ եթէ ցանկան ընտրութիւնը կրնան ընդլայնել քաղաքի տարածքին: Եսիգիւղի նման բնակչութիւնը նուազած թաղի մը վարչութիւնը այդ ճամբուն դիմելով միթէ սխա՞լ գործած կ՚ըլլայ: Լաւ՝ այս ընթացքին եւ այս թաղին ընտրութիւնը 10-15 քուէներով աւարտել ուզողները միթէ այս համայնքին ամենաստորին մարդիկը չե՞ն: Անոնք համոզուած են թէ տարին հազիւ մէկ, երկու անգամ մեզ հետ պիտի հանդիպին, պիտի բարեւեն, պիտի լոլոգեն ու ապա մեր նախնեաց ժառանգը իրենց քսակը պիտի լեցնեն: Կամ շատ խելացի ըլլալու են, կամ ալ շատ մեծ բարեկամներ ունենալու են: Կը խորհին թէ մամուլն ալ լուռ կը մնայ, աչք կը փակէ իրենց արարքներուն: Զեւով մը մեր սեփական ունեցուածքը կը կեղեքեն եւ եթէ յանկարծ մէկն ալ զիրենք զգուշացնէ, յօնքերը կիտելով -ես այստեղը կը պահպանեմ, հապա դուք ո՞ւր էիք- պիտի ըսեն»:

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՊԵՐՃ ԱՐԱՊԵԱՆ

Սահակ Սրբազանի այս ուշագրաւ ելոյթէն ետք մենք ալ մեր կարգին կապ հաստատեցինք իր հետ եւ աւելի լրացուցիչ բացատրութիւններ առինք իրմէ: Սրբազանը անգամ մը եւս հաստատեց իր միտքերը եւ աւելցուց որ այս բոլորի եւրին մեր ժողովուրդի անտարբերութիւնը կը տեսնէ: «Հետզհետէ համայնքային խնդիրներու նկատմամբ անտարբեր, այլասերած, համայնքային ապրումներու անհաղորդ մարդկանց թիւը կ՚աճի: Ժամ առաջ պէտք է վերահաստատենք հասարակական գիտակցութիւնը եւ աշխատինք իր մայրենիին, հաւատքին, մշակոյթին հաւատարիմ սերունդներ հասցնել»:

Սեւան Նշանեան մեկուսացուած է

Իր սեփական հողատարածքին վրայ ապօրինի շէնք կառուցելու մեղադրանքով, երկու տարի ազատազրկման դատապարտուած անուանի բառարանագէտ, մտաւորական Սեւան Նշանեան, այժմ կրկնակի կը պատժուի բանտին մէջ մեկուսացուելով:

«Սեւան Նշանեանին Ազատութիւն» կոչեալ միջազգային յանձնախումբը «Միջազգային ներման կազմակերպութիւն», «Փէն գրողներու միութիւն», «լրագրողներ առանց սահմաններու», «Ազատութեան տուն», «Հրատարակիչներու միջազգային միութիւն», «Լրագրողներու Եւրոպայի միութիւն» եւ այլ նմանաբնոյթ կազմակերպութիւններուն նամակ գրելով տեղեկացուց Սեւան Նշանեանի դէմ գործադրուած ճնշումները:

Ինչպէս ծանօթ է հանրութեան, Սեւան Նշանեան, բազմաթիւ դիմումները անպատասխան մնալէ ետք, իրականութեան մէջ ապօրէն շինութիւններու դրախտ մը եղած Թուրքիոյ մէջ, իր սեփական հողատարածքին վրայ 60 քառակուսի մեթր միայարկ ու միսենեականի քարաշէն տուն մը կառուցելուն համար, քանիցս դատուելով ամէն անգամուն երկար տարիներու բանտարկութեան վճիռներ արձակուած էր իր մասին: Ի վերջոյ երկու տարուայ բանտարկութեան վճիռը գործադրելու համար ուղարկուեցաւ Թորպալըի բաց բանտը:

Նշանեան այստեղ յայտնաբերեց թիկնապահներէն մէկուն գողութիւնը եւ իմացուց բանտի վարչութեան: Իսկ վարչութիւնը այդ դիմումը անկարգութիւն համարելով Նշանեանին աքսորեց Պուճայի փակ բանտը: Հոն ալ յարմար բանտախցիկի չգոյութեան պատճառաբանութեամբ հարկադրուեցաւ քարէ սալայատակի վրայ գիշերելու: Երբ այս իրողութիւնը լսուեցաւ, իշխանութիւնները ստիպուեցան անուանի գրողը այս անգամ ալ Շաքրանի բանտը ուղարկել:

Եւ ահա վերջին ոտնձգութիւնը տեղի կ՚ունենայ Շաքրանի մէջ եւ բանտի վարչութիւնը իբրեւ թէ կեանքի անվտանգութիւնը ապահովելու պատրուակով կը մեկուսացնէ Սեւան Նշանեանը: Նշանեան այս մասին գրի առած է հետեւեալ նամակը.-

«Բանտի թիկնապահներէն լսեցի, որ իբրեւ թէ կեանքի անվտանգութեանս համար աղերսագրով մը կանխամիջոցներ պահանջեր եմ: Ոստիկան զօրաց սպան կը պնդէ, թէ ինք անձամբ տեսած է այդ աղերսագիրը:

Ես նման աղերսագիր մը չեմ գրած: Կեանքիս սպառնացող վտանգ մը չեմ նկատած: Այս պնդումները սուտ են: Բաց բանտի մէջ 250 եւ Պուճայի մէջ 110 բանտարկեալներով շրջապատուած էի եւ բոլորէն ալ յարգանք կը տեսնէի:

3 Ապրիլ թուակիր աղերսագրով, հետգազօտութիւններս եւ գրառումներս աւելի հանգիստ կատարելու համար զատ սենեակ մը պահանջեցի: Այդ պահանջը անվտանգութեան հոգերու հետ կապ չունէր:

Շաբաթական մարմնամարզական աշխատանքներուն այլ բանտարկեալներու հետ մասնակցելու խնդրանքս, վարչութեան 12 Մայիս թուակիր որոշումով մերժուեցաւ, ապահովութեան պատճառաբանութեամբ:

Եթէ անձիս ուղղեալ իրաւ սպառնալիք մը գոյութիւն ունի, այդ մասին պէտք է որ ես ու իմ իրաւապաշտպանս տեղեկացուինք: Եթէ նման տեղեկութիւն մը ինձմէ գաղտնի պահուի, բանտի վարչութիւնը կրնայ ծանր պատասխանատուութիւն կրել: Եթէ փաստացի լսում մը չկայ, կատարուածները որպէս իմ հիմնական իրաւունքներուս բռնաբարումը պիտի գնահատուի: Կը պահանջեմ որ զիս բանտին մէջ մեկուսացնող, այլ բանտարկեալներու հետ շփումս արգիլող, մարմնամարզութեան, դասընթացքի նման ընկերական միջոցառումներէ զրկող կիրարկումները վերջ գտնեն»:

Լեւոն Արք. Զէքիեան կը ժամանէ 10 Յուլիսին

Իսթանպուլի Կաթողիկէ Հայոց Թեմական գրասենեակը մամուլին յղուած յայտարարութիւնով մը հրապարակեց նորընտիր Առաքելական Կառավարիչ Գերպ. Տ. Լեւոն Արքեպիսկոպոս Զէքիեանի, թեմէ ներս պաշտօնական մուտքին յատուկ ժամանակացոյցը: Ըստ հաղորդագրութեան 10 Յունիսին Զէքիեան Սրբազանի Իսթանպուլ վայրէջքի ժամը ճշդուած է՝ 14.10: Սրբազան Հօր Սագըզաղաճի Աթոռանիստ Ս. Աստուածածին եկեղեցի ժամանումը նախատեսուած է ժամը շուրջ 16.00-ին:

Յետ գոհաբանական աղօթքի, Գերապայծառ Տէրը ներկաներուն պիտի տայ իր անդրանիկ օրհնութիւնը, որպէս Թեմիս Առաքելական Կառավարիչ, ապա պիտի ուղղուի դէպի Ս. Յակոբի հանգստարանը, իր ողջոյնը եւ յարգանքի տուրքը մատուցանելու Թեմիս վաստակաշատ Վիճակաւոր Տ. Յովհաննէս Արքեպս. Չոլաքեանին:

15 Յունիս Կիրակի, ժամը 11.00-ին, Գերապածառ Տէրը հովուապետական իր առաջին հանդիսաւոր Ս. Պատարագը պիտի մատուցանէ, Աթոռանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Ծիծեռնակաբերդ-Թաքսիմ

Հայ ժողովուրդի պատմամշակութային անցեալը այնպէս պարտադրած է, որ կարգ մը կառոյցներ, բացի իրենց իսկական իմաստէն, ունենան նաեւ նոյնքան կարեւոր երկրորդ կամ նոյնիսկ երրորդ իմաստներ:

Գիտենք որ հայ ժողովուրդի համար եկեղեցին միայն աղօթատեղի չէ, ինչպէս դպրոցն ալ լոկ ուսումնարան:

Երկուքն ալ ունին իրենց այլ առաքելութիւնները:

Սովորաբար այլ ընկերութիւններէ ներս մարդիկ աղօթատեղի կ՚երթան աղօթելու համար: Դպրոց կ՚երթան ուսանելու միտումով: Իսկ մեր մօտ եկեղեցին ժողովարան է նաեւ: Ժողովարան՝ ուր կը քննարկուին ազգին բազմաբնոյթ հոգերը, խնդիրները: Հայ դպրոցը բացի կրթօճախ ըլլալէ, շատ կարեւոր դեր կը կատարէ ազգապահպանման խնդրին մէջ: Նոյնիսկ մեր մայրենիին անսասանութիւնը կապած ենք դպրոցներու գործունէութեան: Եւ այս բոլորը իրենց գործունէութեան մէջ վառ պահելու համար մենք՝ միայն մենք կը կարօտինք անհատներու նուիրեալ ծառայութեան: Այլ օրինակներու մէջ պետութեան մը ստանձնած ծառայութիւնը մենք ստիպուած ենք վերցնել մեր ուսերուն վրայ:

Երբեմն այս ձգտումը կրնայ խիստ վնասակար հետեւանքներ ալ ունենալ: Տարիներ առաջ Իսթանպուլի մէջ նախաձեռնուած էր «Գրական ակումբի» փորձ մը: Հակառակ որ շատ շահեկան էր այդ ծրագիրը, ինքն իր մէջ քայքայուեցաւ նախաձեռնողներէ ոմանց այդքանով չբաւարարուելուն եւ ակումբէն հրատարակչական ծառայութիւն ալ պահանջելուն բերմամբ: Տիմյաթի բրինձը սուղ արժած էր եւ զրկուած էինք տունի ճաւարէն:

Ահա այդպէս բեռ մը ստանձնած եօթ տիկիններ էին մեր այցելուները, որոնք եկած էին հեռաւոր Փարիզէն, իբրեւ պատմական Դպրոցասէր վարժարանի խնամակալուհիներ ու կը պատմէին իրենց առջեւ ցցուած լուրջ մարտահրաւէրները:

Հայոց Ցեղասպանութեան դարադարձին զուգահեռ, յատուկ ցուցահանդէսով մը պիտի ներկայացնէին իրենց հաստատութեան պատմութիւնը: Եւ քանի որ իբրեւ հաստատութիւն Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւնը հիմնուած էր Պոլիս՝ Օրթագիւղ թաղը, անոնք ալ բռնած էին այդ մեկնակէտի ճամբան:

Ժամանակը սուղ էր ու չիմացանք իրենց անձնական տպաւորութիւնները: Դիմեցինք «էմփաթի»ի դրութեան: Պահ մը խորհեցանք, որ արդեօք մե՞նք ինչպէս կը տպաւորուէինք Սրբուհի Տիւսափնեբու, Հայկանոյշ Մառքերու ոտնահետքերով եթէ մագլցէինք Օրթագիւղի բարձունքը: Մտնելով Թարգմանչաց Դպրոց, դրան վրայ կարդալով պատմական յուշագրութիւնը այդ հաստատութեան, մեր միտքը ի՞նչ թռիչք կ՚առնէր, ինչե՞ր կը պատկերանային մեր յիշողութեան առջեւ:

Կասկած չկայ որ Պոլիսը, մանաւանդ հայ Պոլիսը իր պատմամշակութային հարստութեամբ ատակ է «ես Թուրքիա հազիւ հրասայլի վրայ կ՚երթամ» ըսող դեռ բազմաթիւ տհաս հայ ազգայնականի դիմաց օրըստօրէ աւելի գրաւիչ ըլլալու ներուժի եւ մերօրեայ պոլսեցին ալ այդ ներուժին հաւատարիմ պահակն է:

Սակայն այդ բոլորը դժուար է թերթի սիւնակի մը տարողութիւնով հաւաստիացնել, բաղդատմամբ անձնական փորձառութեան:

Ցեղասպանութեան դարադարձին, յստակ է որ յաջորդ տարուայ Ապրիլի 24-ի օրերուն աննախադէպ թրքական հոսք մը պիտի ապրուի դէպի Ծիծեռնակաբերդ եւ փոխադարձաբար աննախադէպ սփիւռքահայերու հոսք մը՝ դէպի Թաքսիմի հրապարակ:

Բայց աւելի իմաստալից պիտի ըլլայ, երբ հոսքէն դուրս գայ շօշափելի, փաստացի յառաջընթացներ, որոնք ծառայեն հարիւրամեայ անարդարութիւնը արժանի կերպով վերացնելու, կոտտացող վէրքը սպիացնելու:

pakrates@yahoo.com

Ինչպէս պիտի ճանչցուին Հայոց եւ Յունաց Պատրիարքարանները

ՈՒՅԳԱՐ ԿԻՒԼԹԷՔԻՆ
uygargultekin@agos.com.tr

Թուրքիոյ կրօնական համայնքներու առջեւ ցցուած մեծագոյն խնդիրներէն մէկն ալ անոնց պաշտօնական ներկայացումով կը յայտնուի: Այս խնդիրը յատկապէս տեսանելի կ՚ըլլայ ներկայացուցչական ընթացքներու եւ կալուածներու գրանցման միջոցին: Կրօնական համայնքները պետական կառոյցներու հետ կը շփուին հիմնարկներու կամ միութիւններու միջոցաւ: Նոյն միջնորդութիւնը անհրաժեշտ կը դառնայ նաեւ կալուածներու շահագործման միջոցին:

Թուրքիոյ Հայոց Պատրիարքարանը, Յունաց Տիեզերական Պատրիարքարանը կամ Հրէից Ռաբունապետարանը, որպէս իրենց համայնքներու գլխաւոր ներկայացուցչութիւնները մերթ ընդ մերթ հանդիպումներ կ՚ունենան երկրի իշխանութիւններուն, Հանրապետութեան նախագահին, Վարչապետին, կամ ալ նախարարներուն հետ: Արարողակարգի առաջին գիծերու վրայ է իրենց տեղը: Նոյնպէս օտար դիւանագէտներու հետ ալ յաճախ անոնք են որ կը տեսակցին: Իրենց հանգամանքը ճշդուած է նաեւ Լոզանի Դաշնագրով, որ Թուրքիոյ հանրապետութեան հիմնադիր պատճէնը կը համարուի: Բայց ի դէմ այս իրողութեան, այդ հաստատութիւնները օրինաւոր ճանաչումի չեն արժանացած:

«ԵՄԻԱ» որ այլեւս Թուրքիոյ Վեհագոյն ատեանը կը համարուի, այս նիւթի շուրջ յստակ մերձեցումներ ունի: Դատարանը այս հաստատութիւններուն իրաւական ինքնութեան ուրացումը իրաւունքի յափշտակում կը համարէ: Սակայն այս նիւթի շուրջ ցարդ որեւէ դիմում չէ կատարուած ԵՄԻԱ-ին:

Պիլկի Համալսարանի իրաւաբանական բաժնի դասախօսներէն Օգն. Դոց. Լամի Պէրթան Թոքուզլու ԵՄԻԱ-ի վճիռները եւ Թուրքիոյ համար գործադրելի եղանակները մեկնաբանեց «Ակօս»ի ընթերցողներուն համար: Ան նշեց, թէ Թուրքիոյ մէջ փիրող դրութիւնը ի հիմանէ ներհակ է ԵՄԻԱ-ի վճիռներուն: Միւս կողմէ երկրի սահմանադրական ատեանն ալ կրօնական նիւթերու շուրջ իր որդեգրած ոճիրներով նոր հասկացողութեան մը գոյացման կը նպաստէ:

«Կրօնից Տեսչութեան բոլոր կրօնական համայնքներուն հաւասար հեռաւորութեամբ մերձենալով, պետութեան կրօնական համայնքներու հետ յարաբերութիւնը դասաւորող կառոյցի մը վերածուելով կրնանք ազատամիտ լուծում մը գտնել: Այսպիսով կարելի է արհմիութիւններու կամ քաղաքական կուսակցութիւններու պարագային գործադրուած յատուկ իրաւական ինքնութիւն մը գոյացնել: Վերջապէս նման լուծումը կրօնական համայնքներուն իրենց հոգեւոր ապրումներու մէջ առաւելագոյն ինքնավարութիւնը պիտի պարգեւէ: Սակայն կրօնական ծառայութիւնները Թուրքիոյ մէջ երկար ատենէ ի վեր կ՚ընկալուի որպէս պետական ծառայութիւն: Այդ իսկ պաճառաւ ալ նման լուծում մը, թէ կրօնի վրայ վերահսկիչի դերը իրացուցած պետութենէն եւ թէ կրօնական ծառայութիւններու միջոցին պետական նեցուկէն օգտուող հասարակութենէն, որոշ դիմադրութիւն կրնայ տեսնել: Հետեւաբար լաւագոյն լուծումը դիւրաւ չի համապատասխաներ ամենահաւանականին»:

Օրթագիւղի մզկիթը դեռ կը դիմադրէ

ԷԼԻՖ ԱԹԱԼԱՅ
elifatalayposta@gmail.com

Իրենց ճարտարապետական շնորհով ու գիտութեամբ, Իսթանպուլ քաղաքին բազմաթիւ կոթողներ ժառանգած Պալեան գերդաստանի գեղեցիկ գործերէն Օրթագիւղի Մէճիտիէ մզկիթը երեք տարուայ նորոգութենէ ետք կը վերաբացուի:

Օսմանեան Սուլթան Ապտուլմէճիտի պատուէրով, Նիկողոս Պալեանի ձեռամբ կառուցուած մզկիթը, 1853-ի շինութեան թուականէն ցայսօր, հինգ անգամ վերանորոգութեան ենթարկուած է:

Պատմական աղբիւրներու համաձայն, մզկիթը կառուցուած է Փաթրոնա Հալիլի ապստամբութեան շրջանին փուլ եկած Մահմուտ Աղա Մէսճիտի գտնուած վայրը: Ան այլ արքայական մզկիթներու նման ունի յատուկ «Հիւնքար»ի բաժին եւ ԺԹ. դարու Իսթանպուլեան ճարտարապետական ճաշակը ներկայացնող՝ Նէօ Պարոք ոճի յատուկ նախշազարդ դիմագծով ուրոյն օրինակ մը կը հանդիսանայ: Դարձեալ նոյն շրջանին եւ ոճին յատուկ լայն ու բարձր պատուհաններու շնորհիւ օժտուած է բնական լուսաւորութեամբ, եւ մէկական «շէրէֆէով երկու մինարէներ ունեցող մզկիթը երկրին բազմակրօն ու բազմամշակոյթ յատկութեան ալ խորհրդանիշերէն է, քանի որ անմիջական հարեւանութեամբ կը գործեն հայոց, յունաց եւ հրէից աղօթատեղիներ:

Նիկողոս Պալեանի այս գեղակերտ օրինակը, ԺԹ. դարէն ԻԱ. դար երկարող ժամանակահատուածին մէջ եւս պատգամներ ունի փոխանցելու: Յիշենք որ Չամլըճայի բարձունքին նոր մզկիթ մը կառուցելու նիւթին շուրջ, վարչապետ Էրտողան «Մզկիթի շինութեան մէջ ոչ մահմեդականի մը այդ հոգին զգալը դիւրին չէ» ըսած էր: Յայտնի է, թէ այս նախադասութիւնը իր նախնիներու մտայնութիւնը իւրացնելէ զուրկ, մտքի մը պատմութիւնը ուրանալու երեւոյթն է:

Տարօրինակ խաբեբայութիւն մը

Հին պատմութիւն մը զարմանալիօրէն այժմէականացաւ 4 Յունիս թուակիր «Սապահ» օրաթերթի լրատուութեամբ: Այդ թղթակցութենէն յայտնի կը դառնար, թէ Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ՝ Արամ Արք. Աթէշեան, անցեալ տարուայ 25 Յուլիսին զոհը կը դառնայ Քէմալ Թայֆուն Նարկին անուն դրամաշորթի մը, որ ինքզինք կը ներկայացնէր «Ազգային Կալուածոց Քննիչ»ի տիտղոսով:

Նարկին նախ զանգահարած է Պատրիարքարան եւ «Վարչապետական գրասենեակէն կը փնտռեմ» ըսելով ժամադրութիւն պահանջած է: Ապա տեսակցած է Արամ Սրբազանի հետ, յայտնած է, թէ Սանասարեան Խանի վերադարձուելու խնդրի մասին Վարչապետարանի մէջ որոշում կայացած է եւ արդէն սկսած է այդ ուղղութեամբ գործընթացը: Իր ձեռքը ունեցած է Վարչապետարանի պաշտօնական թուղթերը, որոնց վրայ գրուած է «շտապ, գաղտնի, ստուգուած»: Ստորագրութիւն ստացած է Սրբազանէն եւ ստորագրուած թուղթի պատճէնը յանձնած է ետ: Նարկին թղթածրարներու որպէս ծախս պահանջած է 6000 ԹԼ., որ փոխանցուած է իրեն:

Պատահարէն ետք, Աթէշեան Սրբազան կապ հաստատած է Վարչապետարանի հետ ու այսպիսով յայտնի դարձած է խաբէութիւնը: Սրբազանը իսկոյն բողոք ներկայացուցած է տուեալ դրամաշորթի դէմ:

Այս հանգրուանին նոր առեղծուած մը եւս կը յայտնուի: Ոստիկանական քննութիւններով յայտնի կը դառնայ, թէ սոյն թուականի պատկանող Պատրիարքարանի տեսախցիկներու եւ ձայնագրիչ սարքերու արձանագրութիւնները ջնջուած են: Նոյնպէս անգոյ են Պատրիարքարանի մուտքին գտնուող ոստիկանական մօպէսէ տեսախցիկներու արձանագրութիւնները: Պատրիարքական աղբիւրները կը վկայեն, թէ զեղծարարը տեղեակ էր Վարչապետ Էրտողանի, Արամ Արք. Աթէշեանի եւ անմիջական քանի մը բարձրաստիճան պետական պաշտօնեայի միջեւ անցած խօսակցութեան մանրամասնութիւններուն:

Ոստիկանութիւնը յաջողեցաւ Քէմալ Թայֆուն Նարկին անուն 36 ամեայ առափախաւը ձերբակալել: Յայտնի դարձաւ, թէ ինք նախապէս գրանցուած է ինը տարբեր բանտերու ցանկերուն:

Արամ Սրբազան եւս հաստատեց լրատուութիւնը եւ «Ակօս»ին տուած բացատրութիւններէն ետք յայտնեց նաեւ, թէ այդ օր Վարչապետին հետ խօսած էին Սանասարեան Խանի նիւթը: «Կը շարունակուէր Խանը վարձելու գործընթացը: Վարչապետը խոստացաւ, որ պիտի քննեն օրինական կարգադրութիւնները եւ ըստ այնմ պիտի վարուին: Նոյնիսկ ըսաւ, որ այդ քննարկութեան շրջանին պիտի կասեցնեն վարձելու գործընթացը»:

Ողջոյն Կարապետ Տաքէսեանին

Սայաթ Նովա Երգչախումբի վարչութիւնը եւ անդամական կազմը մեծ ուրախութեամբ կ՚ողջունեն խումբի հիմնադիր անդամներէն գիտնական, գրող, Փարիզի Հրանդ Տինք Վարժարանի մանկավարժական բաժնի պետ Կարապետ Տաքէսեանը, որ նախորդ Հինգշաբթի 27 Մայիս 2014-ին Երեւանի մէջ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի ձեռամբ պարգեւատրուեցաւ Մովսէս Խորենացիի շքանշանով: Հպարտութեամբ կը բաժնենք մեր սիրելի ընկերոջ ուրախութիւնը եւ նորանոր յաջողութիւններ կը ցանկանք իր ազգանուէր ու մարդասիրական գործունէութիւններուն մէջ:

Սայաթ Նովա Երգչախումբ

Կեդրոնականցիներ ոգեկոչեցին Յ. Ճ. Սիրունին



Ինչպէս որ ժամանակին հաղորդած էինք, անցեալ 30 Մայիս Ուրբաթ երեկոյ Ֆէրիգիւղի Նազար Շիրինօղլու սրահին մէջ գրող, հրապարակագիր եւ բանասէր Յակոբ Ճօլօլեան- Սիրունիի ոգեկոչման հանդէս մը կազմակերպուած էր, իր երբեմնի վարժարանին՝ Կեդրոնականի ուսուցիչ եւ սաներուն կողմէ, յիշելով, որ Էսաեանի նախակրթարանի եւ Կեդրոնականի 1909-ի լիսէի շրջանաւարտ Սիրունի, 1915-ի արհաւիրքէն փրկուած էր պատահաբար, պահուըտելով՝ Թաթավլայի վերջաւորութեան խուցի մը մէջ, մինչեւ զինադադար: Դեռ Կեդրոնականի աշակերտ՝ ան կ՚աշխատակցէր «Մասիս» հանդէսին: 1907-ին ան կը մեղադրուէր ու բանտարկուէր իբրեւ թէ արգիլուած թերթեր Պոլիս բերելու յանցանքով: Այդ տարիներուն ան կը հիմնէր Էսաեան եւ Կեդրոնական սանուց միութիւնները: Բարձրագոյն ուսումը կը ստանար Պոլսոյ Համալսարանի Իրաւաբանական ճիւղին մէջ: Դանիէլ Վարուժանի եւ Կոստան Զարեանի հետ հրատարակած էին «Նաւասարդ» տարեգիրքը:

Սիրունի 1922-ին կը ստիպուէր հաստատուիլ Ռումանիա: 1944-ին կ՚աքսորուէր, տասը տարի վերջ կը վերադառնար Պուքրէշ: Իր գրի առած հազարաւոր էջերը արդէն կորուստի կը մատնուէին իր բանտարկութեան շրջանին:

Պուքրէշի մէջ կ՚աշխատակցէր կամ խմբագրութիւնը կը ստանձնէր շարք մը հանդէսներու եւ պարբերականներու, այդ կարգին նաեւ Մայր Աթոռի «Էջմիածին»ին: Յետ մահու ընտրուած է Ռումանիոյ Ազգային Խորհրդի պատուոյ անդամ: Իր բազմաթիւ հատորներէն կարեւորագոյններէն է՝ քառահատոր «Պոլիս եւ Իր Դերը» անուն կոթողային գործը:

Եւ քանի մը յուշեր Սիրունիի Կեդրոնականի օրերէն…

«Վաթսունէ աւելի էինք Կեդրոնականի առաջին դասարանին մէջ: Նոր շրջանի առաջին հունձքը այնքան հոծ թիւով աշակերտ հաւաքեր էր հոն Պոլսոյ բոլոր թաղերէն: Բերան ու Սամաթիան, Գումգապուն ու Մաքրիգիւղը, Սկիւտարն ու Պէշիկթաշը, Օրթագիւղն ու Գուրուչէշմէն, Խասգիւղն ու Գասըմփաշան, բոլո՛րը, բոլո՛րը կային մեր դասարանին մէջ»:

«Կեդրոնականի մէջ միօրինակ ու միատեսակ կը ճաշէին բոլորը: Ամենէն զուարթ տեղը դպրոցին ճաշարանն էր: Տնտես Գրիգոր աղբար մը ունէինք, որ կը հայթայթէր մեր ցերեկուան ճաշը: Շահաբեր առեւտուրի լաւ միջոց մըն էր ասիկա իրեն համար: Մեր պանիրը, ձիթապտուղը, հէլվան, խաղողը եւ ուրիշ այս կարգի սննդեղէններ իրմէ կը գնէինք, ցերեկին մեր վտիտ պիւտճէով: Բայց մեր տնտես աղբարը իր հաշիւը գիտէր: Ծախած ձիթապտուղին հատիկները ծայրը ծայրին հաշուուած էին, իսկ իր պանիրի բարակ շերտերը համբաւաւոր: Օր մը, մեր բնագիտութեան ուսուցիչը, գրաւոր քննութեան հարցումներուն մէջ աւելցուած էր. թուել թափանցիկ մարմինները: Մեր սրամիտ ու չարաճճի դասընկերներէն մին, կատակասէր Ռոպէնսոնը, իր պատասխանին մէջ, օդի, ջուրի նման ծանօթ մարմինները թուելէ յետոյ կ՚աւելցնէ… եւ տնտես աղբարին ծախած պանիրը…»

«Ղալաթիոյ եկեղեցին տեսակ մը ուխտավայր էր Պոլսոյ հայութեան համար: Կառուցուած յանուն Ս. Գրիգոր Լուսաւորիչի՝ ան ժողովուրդին ծանօթ էր իբր Ամենափրկիչ: Պոլիսը, ամէն Հինգշաբթի ժամադրութիւն կու տար Ղալաթիոյ ժամուն բակը: Ոչ միայն անգործ մարդիկը, կիներ, աղջիկներ, որոնք ժամէ ժամ կը պտտէին ուխտի, այլեւ գործի մարդիկ, շուկայ երթալէ առաջ անգամ մը կու գային Ամենափրկիչին: Ղալաթիոյ հինգշաբթիները տեսակ մը ամուսնական սակարան ալ էին: Յաճախ հոն կու գային հանդիպումներ ունենալու եւ ընտրութիւն կատարելու երկու սեռէ ապագայ թեկնածուներ»:

«Սփոռը կանուխէն մտաւ Կեդրոնական: Ֆութպոլն էր այն սփոռը ու զայն կը խաղային օտար պահականաւերու նաւազները: Դպրոցներէն Ռոպերթ Քոլէճն էր միայն զայն որդեգրողը: Երկրորդը եղանք մենք: Սանթրալ կոչեցինք մենք մեր Ֆութպոլի խումբը: Պահ մըն ալ Ֆութպոլ խաղացի այս խումբին մէջ»:

Տատեան ասմունքի մրցոյթի՝ առաջինը

Միջմիութենական աւանդութիւն մը դարձած «Ասմունքի Օր»ը, այս տարի կայացաւ 30 Մայիս Ուրբաթ երեկոյ, Տատեան Վարժարանի Սանուց միութեան մէջ: Մրցումին մասնակցեցան՝ Տատեան, Էսաեան, Ս. Խաչ Դպրեվանք, Պոմոնթի Մխիթարեան, Ներսէսեան Ճեմարան վարժարաններու միութիւնները եւ Մարալ պարի համոյթը: Դատակազմի անդամներն էին՝ Սիլվա Կոմիկեան, Մարիամ Տրամէրեան, Փասքալ Թէօրէնլի եւ Սեւան Տէյիրմէնճեան: Մասնակիցները արտասանեցին Վարդերէս Գարակէօզեանին «Մեսրոպակերտ այս տողերուն ես կը պարտիմ» բանաստեղծութիւնը: Մրցանակին առաջին դիրքը գրաւեց Եսթեր Հապէշ (Տատեան), երկրորդը՝ Սէրլի Մայիսօղլու (Էսաեան), երրորդը՝ Քաթիա Պաքըր (Տատեան), իսկ Պոմոնթի Մխիթարեանէն Միրելլա Կիւրէլ պարգեւատրուեցաւ դատակազմի յատուկ մրցանակով: Բոլոր մասնակիցներուն յանձնուեցան յուշանուէրներ:

Արմեն Գասպարեանի ժապաւէնը «Գողացուած մանկութիւն»

ԾՈՎԻՆԱՐ ԼՈՔՄԱԿԷՕՋԵԱՆ
dzovinarl@rambler.ru

Դրանք քայլում են քով քովի, սպեղծում նոյն տեղում եւ ժամանակին, մէկի մասին ասում են «նման կինօները ծնւում են ժողովրդի պահանջարկից», եւ ժողովուրդը տեսնում է իր թերի ու յիմարացած տարբերակը, իսկ միւսը սպեղծում է մարդու լաւագոյն, պատուարժան մեկնակերպը (versiyon) եւ այդ կինօն իսկական է: Նոյնն էր ասում եւ Մարտիրոս Սարեանը 1927-ին Փարիզից Լուսիկ Սարեանին ուղարկած նամակում. «Դժուար բան է, Լուսիկ ճան, արուեստը: Շատ դժուար է լաւը վատից ջոկելը, իսկականը ֆալշից, երկուսն էլ իրար կողքի են ապրում, երկուսն էլ ուզում են ապրել եւ երկուսն էլ աշխատում են իրար ոչնչացնել»:


Արմեն Գասպարեան

Երախաների փօնական օրը Կիւմրիում

Յունիսի 1-ին Երախաների պաշտպանութեան օրը Կիւմրի քաղաքի «Հոկտեմբեր» կինօթատրոնում պիտի կայանար Արմեն Գասպարեանի «Գողացուած մանկութիւն» վաւերագրական ֆիլմի պրեմիերան: Մի բան է ֆիլմը դիտել տան պայմաններում միայնակ, բոլորովին տարբեր է՝ կինօթատրոնի 230-անոց դահլիճում, որտեղ հանդիսականը դիտում է մի ֆիլմ, որը իր քաղաքի, ուրեմն իր իսկ մասին է: Այդ առթիւ մենք մի խումբ երեւանցիներով ձեռնարկեցինք ուխտագնացութիւն դէպի Լենինական-Կիւմրի. ցաւօք, երեւանցիներ կան, որոնք առիթ չեն ունեցել այցելել Երեւանից դուրս ոչ մի ուրիշ Հայաստանեան քաղաք, մինչդեռ Երեւանն ինքը սկսում է Լոռու, Շիրակի եւ միւս 8 մարզերից, որոնց տաղանդաշատ կեդրոնաձիգ ուժերը ուրուագծում են մայրաքաղաքի արուեստի խճանկարը, բոլորովին չաղքատացնելով իրենց բնօրրանը, քանզի արուեստառատ բերրի հողը միշտ ծնում է նոր տաղանդներ, որոնց տաղանդը ծառայում է ոչ միայն արուեստին, այլ ձեւաւորում կեանքի ռազմավարութիւն, ինչպէս մենք տեսանք Արմեն Գասպարեանի «Գողացուած մանկութիւն» ֆիլմի հերոսուհու, 10 տարեկան աղջնակի մէջ:

Ֆիլմի շարժառիթն էր 25 տարի առաջ տեղի ունեցած երկրաշարժը, որը ոչ միայն քանդեց ու աւերեց Սպիտակ եւ Լենինական քաղաքները իրենց շրջակայ գիւղերով եւ անօթեւան թողեց 500 000 մարդ (պաշտօնական տուեալներով զոհուեց 25.000 մարդ, որոնցից 10.000-ը երախաներ էին), այլ՝ դարձաւ համազգային մակնիշ, ինչի շնորհիւ ստեղծւում են բազմաթիւ մարդասիրական, սոցիալական եւ մշակութային կազմակերպութիւններ, որոնք սնւում են ներդրումներով, բայց ֆիլմի հեղինակը կեղծ է համարում դրանց առաքելութիւնը եւ իր ֆիլմով ապացուցում է այդ կեղծիքը: 25 տարի անց Լենինականը, որը կրկին վերանուանուեց Կիւմրի, շարունակում է մնալ աղէտի գօտի եւ 4000 ընտանիք մնում են անօթեւան: Քանդած շէնքերը հրապուրիչ են երախաների համար, որոնք խաղում են աւերակների մէջ, ինչպէս դա անում էին երկրորդ աշխարհամարտից յետոյ ռմբակոծուած գերմանական քաղաքների երախաները, սակայն գերմանացիները քար առ քար վերականգնեցին իրենց քաղաքները, իսկ մենք... մենք գերմանացի չենք:

Նինան եւ իր մանկութիւնը

«Մարդիկ միշտ էս երկրից կ՚երթան, որ գոնէ փող աշխատին, կ՚երթան-կու գան, կ՚երթան-կու գան էլի, բայց օրինակ ես չեմ ուզէ երթալ էստեղից, որովհետեւ էստեղ եմ ծնուել, էստեղ մեծցել, էստեղ ես 4 տարի ջութակի եմ գնացել...», խօսում է 10 տարեկան Նինան. Այնուհետեւ նա բացատրում է, թէ ջութակը ինչ լարուածութիւն է պահանջում. լարւում են ձեռքերը, մատները, դաստակը, լարուածութիւնը տարածւում է մէջքով ու ոտքերով, եւ հարկաւոր է երկու ժամ պառկած մնալ, մինչեւ որ մարմնի լարուածութիւնը անցնի, բայց Նինան արդէն կարողանում է մատները լարերի ճիշդ տեղը դնել... Նա, այդ փոքրիկ գեղեցիկ աղջնակը իր այդ ջութակահարի ձեռքերով ցախ է հաւաքում եւ վառարան վառում, առաւօտեան երկու կրտսեր եղբայրներին արթնացնում, հագցնում, կերակրում եւ մանկապարտէզ տանում. Նա է նրանց մայրը իրականում, որովհետեւ իսկական մայրը երկու տեղ է աշխատում, որպէսզի կարողանայ երախաների ապրուստը հոգայ եւ կացարանի վարձը վճարի:

Այժմ պիտի անդրադառնամ ֆիլմի ամենակարեւոր յատկութեանը. ֆիլմը այնուամենայնիւ կարեկցանք, խղճմտանք չի առաջացնում, ընդհակառակը, այն իր մէջ կրում է հզօր ուժ, որից հանդիսատեսը ինքը ուժ է ստանում: Զգիտեմ, ինչպէս կը տեսնէին եւ կը նկարահանէին ուրիշ ռեժիսորներ, բայց Արմենը այս փոքրիկ աղջնակից կերտում է մեծ մարդու կերպար, Արմեն Գասպարեանի Նինան պատկանում է այն եզակի անձանց շարքին, որոնք իրենց ուսերի վրայ են կրում աշխարհի բեռը եւ կորանալու փոխարէն ուժեղանում են: Ո՛չ, Նինան ամենեւին էլ բամպակի մէջ փայփայած երաժիշտ չի դառնայ, նա կեանքի դժուարութիւնները, ինչպէս ջութակին տիրապետելու լարուածութեանը դիմակայող, անբողոք եւ անտրտունջ լիարժէք մարդ կը դառնայ, եւ եթէ հանդիսատեսը յոտնկայս երկար-երկար ծափահարում էր ֆիլմ ստեղծողների անձնակազմին՝ սցենարի հեղինակ, ռեժիսոր եւ պրոդիւսեր Արմեն Գասպարեանին, օպերատոր (կամերաման) Յարութիւն Չաքմիշեանին, հնչիւնային ռեժիսոր Արմեն Քոչարեանին, ապա Նինային տեսնելուն պէս հանդիսատեսը չկարողացաւ զսպել երկար պահած արցունքները, որովհետեւ Նինան իրօք որ շատ փոքր էր, երախայ էր, իսկ նրա եղբայրները այնքան փոքր էին, որ նրանցից մէկին ես բարձրացրեցի բեմահարթակ եւ այսպիսով նա վերեւից տեսաւ լեփ-լեցուն դահլիճը, որը չէր հոգնում ծափահարելուց:

Սէրն է ճշմարտութիւն

Կարծում եմ, քիչ թէ շատ նորմալ ֆիլմ ստեղծելու համար հարկաւոր է տաղանդաւոր լինել: Տաղանդաւոր ֆիլմ անելու համար պէտք է հանճար լինել: Իսկ հանճարեղ ֆիլմի համար աշխարհ էին եկել Փարաճանովն ու Փելեշեանը, Տարկովսկին ու Ֆելլինին... Ինչեւէ, ֆիլմը շատ տաղանդաւոր է, այն ճշմարիտ է: Արմենը յիշեցրեց Ֆելլինիի ֆիլմի հերոսի խօսքերը ճշմարտութեան մասին. «Մերկ ճշմարտութիւնը առանց սիրոյ, դա սուտ է»:

Ինչո՞ւ ամէն անգամ, երբ հանդիպում ենք «Սէր» բառին, կարծես, յայտնութիւն ենք անում... Արմենին շատ են սիրում լենինականցիները, յատկապէս նրանք, ովքեր սփռուել են աշխարհով մէկ, թողնելով իրենց սիրտը հարազատ քաղաքում: Ուստի ի տարբերութիւն Երեւանի նորակառոյց դատարկ շէնքերի, Լենինական-Կիւմրու հին, բայց դատարկ շէնքերը ամենեւին էլ դատարկ չեն... եւ հենց այդ լենինականցիների հանգանակութիւնների շնորհիւ ֆիլմը իրականացաւ, քանզի միայն Կիւմրու քաղաքապետարանի ֆինանսաւորումը բաւարար չէր լինի: Այս ֆիլմով Արմենը եւ նրա արտագաղթած ընկերները իրենց նուէրը մատուցեցին քաղաքին:

Նինան եւ... Նինան

Կ՚անցնեն տարիներ, իսկ նրանք քով քովի կը քայլեն՝ Նինան եւ Արմենի կերտած Նինայի մոնումենտալ կերպարը: Շուտով Նինան հասակ կ՚առնի եւ կը դառնայ ոչ միայն իր կրտսեր եղբայրների, այլ նաեւ ֆիլմի փոքրիկ 10 տարեկան Նինայի մայրը: Նրանցից ոչ մէկը չի զիջի միւսին, որովհետեւ ի տարբերութիւն արուեստի գործի եւ նրա կեղծ նմանակի, երկու Նինաներն էլ իսկական են:



ԼՈՒՅԾԻՔԱ ՏՈՒՏՈՒ

Հիւանդանոցին տարեդարձը

Ինչպէս կիտէք անցած Հինգշաբթի Համբարձում էր: Էն առաջ մէյ մը պիւթիւն Համբարձումներուն անուան օրը շնորհաւորեմ, զաթը քիչ մնացին: Նոր սերունդէն հիչ մէկը չօճոխին անունը Համբարձում չի տներ կոր արթըխ: Հին հայկական անուններուն ամէնն ալ գործածութենէն դադրեցան եա, ան ալ ուրիշ: Վախտին նոյն փողոցը կտնուող հայ տուներէն քանի մը հատէն մէկուն մէջ մութլախա Համբարձում մը կը կտնուէր: Ինչ շէնութիւն կ՚ըլլար, ինչ շէնութիւն...:

Բայց մենք հինները ձգենք տէ այսօրուան նայինք: Համբարձման տօնը Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցին տարեդարձի օրը ըլլալով ընդունուած է: Անանկ քիմ ամէն տարի տօնախմբութիւն կ՚ըլլայ: Աս տարի ալ էղաւ հէլպէթ եւ փէք աղուոր էր: Առաւօտուն մատուռին մէջ պատարագ ըրին, ետքէն իրիկուան ժամերգութիւն էղաւ:

Մատուռին առջեւի պարտէզը, արարողութիւնը պիւթիւն կրօնաւորներուն եւ ժողովուրդին մասնակցութիւնով շարունակուեցաւ, ախ փէք խորհրդաւոր էր շիտակը... կրնամ ըսել քիմ կենէ անտեսանելի մասնակցութիւնը տեսնուածէն տահա իմաստալից էր:

Հինէն էս ալ կ՚երթայի ամա վերջին քանի մը տարի է քիմ չէի կտնուած, աս տարի պօյ մը էրթամ ըսի: Աղէկ քիմ կացեր էմ, փէք խօշս կնաց: Հէլէ սպասածէս տահա շատ էղող կէնճերուն ներկայութիւնը պիւսպիւթիւն խօշս կնաց:

Կիշերն ալ հիւանդանոցին էտեւի պարտէզը սարքուած խոշոր սեղաններուն շուրջ խըյախ ճաշ մը կերուեցաւ: Ահագին հրաւիրեալի, կրօնաւորներու եւ ծերանոցի անդամներու ներկայութեամբ շէնլիքլի ճաշ մըն էր: Պետրոս Շիրինօղլուն աղուոր խօսակցութիւն մը ըրաւ, հիւանդանոցին կալուածներուն, տեսած նորոգութիւններուն եւ ընդհանուր պիւտճէին մասին տեղեկութիւններ տուաւ: Միեւնոյն ատեն ատ պարքօվիզիօն ըսուած պանով ալ պիւթիւն էղածները ցուցին:

Ճաշակաւոր միւզիք մը կար, աղուոր հայերէն երգեր երգուեցան, ծերանոցի անդամներէն ոմանք էյլէնճէլի տանսեր ըրին, երգերուն մասնակցեցան, միքրոֆօնը առնելով մեներգողներ էղան: Սեղանները ճոխ, ճաշերը համով էին: Վստահ էմ քիմ ներկաները, ճիշդ հարիւրութսունէրկու տարի կանգուն մնացած եւ օրէ օր զօրացած կազմակերպութեան մը տարեդարձի տօնախմբութեան ներկայ կտնուելէն փէք գոհ մնացին եւ պատիւ զգացին: Աստուած կալիք տարեան ալ արժանացնէ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԿՕՍ

ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ AGOS YAYINCILIK BASIM HİZMETLERİ SAN. VE TİC. LTD. ŞTİ. անունով՝ Բահիլ Տինք, ՀԻՄՆԱԴԻՐ՝ Հրանդ Տինք, ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԻՉ՝ Ռոպէր Քոփթաշ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ֆէրտա Պալանճար, ՀԱՍՑԷ՝ Հալասքեարկազի Պողոտայ, Սէպաթ Ափթ. 74, յարկաբաժին 1 Օսմանպէյ, Իսթանպուլ: Հեռաձայն՝ 0212 296 23 64 - 0212 231 56 94 Ֆաքս. 0212 247 55 19 ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ՝ Տիւնիա Սիւփէր Վէպ Օֆսէթ Ա.Ծ. «Կլոպուս Տիւնիա Պասըմէվի» 100. Եըլ Մահալլէսի, Պաղճըլար-Իսթանպուլ: Հեռաձայն՝ 0212 629 08 08 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ Թուրքիա՝ 6 ամսուան 90 ԹԼ. տարեկան 175 ԹԼ. Եւրոպա՝ 6 ամսուան 95 Եւրո, տարեկան՝ 180 Եւրո, Ամերիկա եւ Գանատա՝ 6 ամսուան 130 Տոլար, տարեկան 250 Տոլար, Աւստրալիա՝ 6 ամսուան 150 Տոլար, տարեկան 275 Տոլար: www.agos.com.tr - agos@agos.com.tr

Արտաշէս եւ Սաթենիկ

ՍԱՐԳԻՍ ՍԵՐՈՎԲԵԱՆ
sseropyan@agos.com.tr

Այդ ժամանակներուն, կովկասեան լեռնաբնակ ժողովուրդներէն ալանները, կովկասեան բոլոր լեռնաբնակ ցեղերու հետ միաբանուելով գրաւած էին վրաց աշխարհի համարեա կէսը: Իրանական ռազմատենչ ցեղերէն ալանները կը յիշուին որպէս այժմու «օս»երուն նախնիները, իսկ օսերու երկիրը կը կոչուի Օսեթիա զոր ռուսերը առաջին տառը փոխելով կը կոչեն՝ Ասեթիա:

Ուրեմն այս ալաններուն գլխաւորած կովկասեան լեռնաբնակ ցեղերը, երբ մեծ բազմութեամբ եկան տարածուեցան հայոց աշխարհի հիւսիս-արեւելեան սահմանի մօտ, անոնց ներխուժման դէմ Արտաշէս հաւաքեց իր զօրքերը եւ գնաց պատերազմի: Հայոց զօրքի ճնշումով ալանները քիչ մը նահանջեցին ու անցնելով Կուր գետը, բանակ դրին գետի հիւսիսային ափին: Արտաշէս ալ հետապնդելով ալաններուն, բանակ դրաւ գետի հարաւային ափին, եւ Կուր գետը դարձաւ երկու թշնամի բանակներու սահմանաբաժանը:

Հայոց եւ ալաններու զօրքերու ընհարումի ընթացքին Արտաշէս ձերբակալեց ալաններու արքայազնը: Ալաններու թագաւորը ստիպուեցաւ հաշտութիւն խնդրել, իր պատգամաւորներու միջոցաւ խոստանալով այն ամէնը, ինչ որ Արտաշէս կը կամենար, միաժամանակ առաջարկելով երդմամբ դաշինք կնքել, որ ալաններու կտրիճները այլեւս չեն ասպատակեր Հայոց աշխարհը:

Այս բոլորը եւ Արտաշէս թագաւորի ու ալանաց արքայադուստր Սաթենիկի շուրջ հիւսուած աւանդազրոյցը Ե. դարու ժողովրդական երգիչներէն բանաքաղեր է Պատմահայր Խորենացին: Ուրեմն ալաններու թագաւորի առաջարկի մերժումէն յետոյ, ալաններու արքայադուստրը՝ գեղանի Սաթենիկ գետի հանդիպակաց ափէն կը ձայնէ.

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցիր քաջ ազգին Ալանաց.
Եկո՛ւր, լսէ ալանաց գեղաչեայ դստեր խօսքը:
Տո՛ւր զպատանին.
Քանզի օրէնք չէ սոսկ քէնի համար
Դիւցազններ ուրիշ դիւցազններու
Զաւակներ զրկեն կեանքէն, կամ ալ
Ծառայ դարձնեն ու որպէս ստրուկ պահեն,
Եւ յաւերժ թշնամութիւն հաստատեն
Երկու քաջ ազգերու միջեւ:

Արտաշէս լսելով այս իմաստուն խօսքերը եւ տեսնելով չքնաղ Սաթենիկին, կը սիրահարուի եւ անմիջապէս իր դայեակ Սմբատ Բագրատունին մօտը կանչելով կ՚ուզէ, որ լուր ղրկէ ալաններու թագաւորին ու հաղորդէ իր սրտին փափաքը, միաժամանակ յայտնելով Սմբատին, որ ամուսնանալով ալաններու արքայադուստրին հետ, ինք դաշինք եւ ուխտ կը կնքէ երկու քաջ ազգերու միջեւ եւ պատանին կը վերադարձնէ խաղաղութեամբ:

Սմբատ հաւանութիւն կու տայ Արտաշէսի առաջարկին, անմիջապէս մարդ կը ղրկէ ալաններու թագաւորի մօտ ու կ՚առաջարկէ որ ալաններու օրիորդը Սաթենիկին կնութեան տայ Արտաշէսին:

Բայց ալաններու թագաւորը, երբ Սաթենիկի փոխարէն որպէս գլխագին գրեթէ գանձեր կը պահանջէ, այն ժամանակ...

Հեծաւ արի արքայ Արտաշէս իր Սեւուկը (ձին),
Եւ հանեց ոսկեօղ շիկափոկ պարանը,
Եւ որպէս սրաթեւ արծիւ անցաւ գետը
Եւ նետեց ոսկեօղ շիկափոկ պարանը,
Փաթթեց մէջքը ալանաց օրիորդի,
Եւ շատ ցաւցուց մէջքը փափուկ օրիորդին,
Արագ հասցնելով զայն իր բանակը:

Արտաշէս առեւանգելով գեղեցիկն Սաթենիկին, կը բերէ Արտաշատ. մինչ հայերու եւ ալաններու միջեւ դաշինք կը կնքուի, Արտաշատի մէջ տեղի կ՚ունենայ արքայավայել հարսանիքի խնջոյք:

Եւ երբ Արտաշէս իբրեւ փեսացու կը մտնէ դահլիճ, գլխէն ոսկեայ դրամներ շաղ կու տան, իսկ երբ Սաթենիկ կը մտնէր ամուսնական առագաստը՝ մարգրիտներ կը թափէին գլխուն, այնքան վսեմ էին ու շքեղ այս տեսարանները, որ գուսանները երգեր են.

Տեղ ոսկի տեղայր
Ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգրիտ
Ի հարսնութեան Սաթինկանն:

Այս սովորութիւնը դառնալով աւանդութիւն հասեր է մինչեւ մեր օրերը, որով հարսանիքի ժամանակ շաղ կու տան ցորեն, բրինձ եւ չամիչ կամ ուրիշ չորցած միրգեր, իբրեւ առատութեան եւ պտղաբերութեան խորհրդանշան:

Արտաշէս Սաթենիկին կը դարձնէ իր կանանց մէջ առաջինը: Սաթենիկէն կը ծնի Արտաւազդը եւ ուրիշ զաւակներ:

Շար.՝ 21

Յաջորդով՝ Արտաշէսի եւ Արտաւազդի կռիւը մարացի Արգաւանի դէմ

Արտաշէսեաններու հարստութիւնը

Արտաշէսեան թագաւորական հարստութիւնը Հայաստանին տիրացած է ՆՔ. 189 թուականէն՝ սկսեալ Արտաշէս Ա. թագաւորով, ու շարունակած է մինչեւ ՅՔ. 1 թուականը: 190 տարի տեւած Արտաշէսեան իշխանութեան ընթացքին գահակալած են Արտաշէս Ա. (ՆՔ. 189- ՆՔ. 160), Արտաւազ Ա. (ՆՔ. 160- ՆՔ 115), Տիգրան Ա. (ՆՔ. 115- ՆՔ. 95), Տիգրան Բ. (ՆՔ. 95- ՆՔ. 55), Արտաւազդ Բ. (ՆՔ. 55- ՆՔ. 34), Արտաշէս Բ. (ՆՔ. 30- ՆՔ. 20), Տիգրան Գ. (ՆՔ. 20- ՆՔ. 8), Տիգրան Դ. Եւ Էրատո թագուհի (ՆՔ. 8- ՆՔ. 5 եւ ՆՔ. 2- ՅՔ. 1թ.):

Արտաշէսեանները, ինչպէս արդէն տեսանք աւանդազրոյցներու մէջ, սերած են հաւանաբար նախորդ արքայատոհմ՝ երուանդունիներէն (Արամէական արձանագրութեանց մէջ Արտաշէս Ա. ինքզինք կ՚անուանէ՝ Երուանդական): Արտաշէսեան հարստութեան հիմնադիրը բաւական մեծ յաջողութիւններ ցոյց տուած, երուանդունիներու կորսնցուցած հողամասերը եր առած, համազգային, միաձոյլ պետութիւն ստեղծած էր: Ան ունեցած էր վեց որդիներ՝ Արտաւազդ, Վրոյր, Մաժան, Զարեհ, Տիրան, Տիգրան: Ասոնցմէ Արտաւազդն ու Տիգրանը յաջորդաբար թագաւորած են իրենց հօր մահէն յետոյ, որոնց մասին տեղեկութիւնները կցկտուր են: Արտաշէսեան հարստութեան ամենաակաւոր ներկայացուցիչը կը հանդիսանայ Տիգրան Բ., որու մեծագործութիւնները արդէն այս շարքին մէջ նախապէս ներկայացուցած էինք: Մեծն Տիգրանի եւ յաջորդներուն պայքարը Հռոմի նուաճողական քաղաքականութեան դէմ, ունեցած է Հելլենիստական քաղաքակրթութիւնը պաշտպանելու նպատակ: Արտաւազդ Բ. եւ Արտաշէս Բ. զոհուած են Հռոմի դէմ մղուող պայքարներուն, բայց եւ այնպէս հայ ժողովուրդի յամառ ջանքերու շնորհիւ Հայաստան չէ վերածուած հռոմէական նահանգի:


Արտաշէսին յուղարկաւորութիւնը

ԲԱՌԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԱՇԽԱՐՀԸ

120

ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ
ndaduryan@agbumhs.org

ՓԱՐՈՍ

Կասկած չկայ. հայ քնարերգութեան մէջ ամենէն շատ Վահան Տէրեանն է, որ պաշարուած ըլլալ կ՚երեւի «փարոս»: բառով: Մէկ բանաստեղծութեան մէջ ան, 20-ամեայ բանաստեղծին համար թովիչ, բայց դաժան սիրահար է: Իսկ մէկ այլ ստեղծագործութեան մէջ Տէրեանը կը զգայ, թէ դատապարտուած է մթութեան ու մենութեան, որովհետեւ բացակայ է «փարոս»ը.

«Ինձ հեռուից լոյս փարոս չի կանչում»
«Չի ժպտում ինձ խաղաղ հանգրուան»:

«Փարոս»ը -սերնդակից լեզուներու մէջ pharos, phare, phar, faro, far, hvar- լուսատու աշտարակ է, որ նաւերուն ուղղութիւն կու տայ: Ան ունի լոյսի աղբիւր ու զայն կեդրոնացնող ու հեռուներէն տեսանելի դարձնող ոսպնեակ կամ հայելի: Փարոսները սովորաբար կը կառուցուին ծովափներուն դուրս ցցուած մասերը, ժայռերու վրայ: Կան նաեւ փարոսներու «լողացող» տեսակները, որոնք ամրացուած կ՚ըլլան խարիսխներուն: Ստուգաբանութեան համար

զուարճալի իրականութիւն է, թէ «փարոս»ը ունի թէ՛ բառացի եւ թէ՛ փոխաբերական իմաստ, ուստի, ան կրնայ թէ՛ լոյս տալ եւ թէ՛ տանջանք: Տէրեանն է դարձեալ.

«Մոլորուածին անխօս կանչող փարոսի շող,»
«Քո աչքերը հոգի տանջող:»

Իսկ տեսնելու համար, թէ ինչպէս «շինուեցաւ» այդ բառը, ստուգաբանութեան հետ ճամբորդենք Եգիպտոսի Աղեքսանդրիա նորակառոյց քաղաքը:

Ք.Ա. 305 թուականն է: Նոր մահացած է Մեծն Աղեքսանդրը: Նեղոսի արեւմտեան ափին անոր շինել տուած քաղաքը սկսած է փայլիլ վառ գեղեցկութեամբ ու քաղաքակրթութիւն սփռել ամբողջ Միջերկրականին: Պտղոմէոս I. Փրկիչը -Աղեքսանդրի զօրավարներէն ամենէն վստահելին ու մէկը անոր եօթը թիկնապահներէն- կը դառնայ Եգիպտոսի նոր կառավարիչը: Ան կ՚որոշէ քաղաքին նաւամատոյցը զարդարել կոթողային աշտարակով մը, որ նաեւ լոյս պիտի տար նաւերուն: Ան, աշտարակը յարմար կը գտնէ շինել այն կղզեակին վրայ, որուն անունն էր Փարոս, յունարէն՝ Φαρος, Φαρος, բառ մը, որ ունեցած է հին եգիպտական անյայտ ծագում: Շինարարութիւնը կը տեւէ 12 տարի ու կ՚աւարտի անոր որդին Պտղոմէոս II. Եղբայրասէրի օրով, մօտաւորապէս Ք.Ա. 280-240 թուականին: Եռայարկ աշտարակը կ՚ունենայ 120-130 մ. բարձրութիւն: Առաջին յարկը քառակուսի է, երկրորդը՝ ութանկիւն, իսկ երրորդը՝ բոլորակաձեւ: Անոր գագաթին կը վառուէր խառոյկ: Աշտարակը ունէր նաեւ երկրորդ գործածութիւն. դիտակէտ՝ թշնամի նաւերը յայտնաբերելու համար:

Աղեքսանդրիոյ Աշտարակը -դասական շրջանին մարդու շինած ամենաբարձր շէնքը, եթէ նկատի չառնուին բուրգերը- կը դառնայ Հին Աշխարհի «Եօթը Հրաշալիքներ»էն մէկը, ինչպէս նաեւ՝ յաջորդ դարերուն կառուցուած բոլոր ծովային աշտարակներուն նախատիպը: Ան նաեւ անուղղակիօրէն նպաստած է լեզուներու բառապաշարին. «Փարոս» կղզիին անունը ժամանակի ընթացքին կը դառնայ լուսատու աշտարակներուն հասարակ անունը ու նաեւ բանաստեղծներու ներշնչման աղբիւր: Ահա Ե. Չարենցի «Մեր Լեզուն» բանաստեղծութիւնը, ուր կը տեսնենք, թէ փարոսը միշտ չէ, որ կը ցոլացնէ թախծոտ տրամադրութիւններ, այլ՝ կրնայ նաեւ արթնցնել պայծառ միտքեր.

«Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,»
«Առնական է, կոպիտ, բայց միեւնոյն պահին»
«Պայծառ է նա, որպէս մշտաբորբոք փարոս»: